

Կարգադրական

ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




Քիչ 3





ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏ  HANRAKIDAG
 ՀԱՐԱԹԱԿԱՆ  مجموعہ علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Է. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 3 || 13 ՅՈՒՆԻՍԻԱՐ 1904

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ

ԴԻԼՅԱՋՆԸ



ըթի ժուռնալի նշանաւոր տնօրէնը, Պ. Իբօլիթ Մարինօնի, որ միեւնոյն ժամանակ տպագրական արագատիպ մեքենաներու հնարիչ մըն է, մեռաւ անցեալ շաբթու, ութսուն տարեկան : Արտասովոր դէմք մըն էր սա, որու նմաններ Ամերիկայի մէջ շատ կը տեսնուի :

Քսանր մէկ տարեկան էր երբ հայրը մեռաւ, իբր ժառանգութիւն 70 ֆրանք 10 սանդիմի գումար մը ձգելով իրեն : Իսկ այսօր Պ. Մարինօնիի ձգած հարստութիւնը 45 միլիոն ֆրանքի կը հասնի :

Հոս կուտանք իր իսկ ձեռքովը գրած երիտասարդութեան պատմութիւնը, և մեր շատ մը պատանի դպրոցականներու խորատ կուտանք որ խորին ուշադրութեամբ կարդան, եւ սորվին թէ՛ պարզ գրաշար մը աշխատութեամբ եւ յարատեւութեամբ ի՞նչ վիճակի կրնայ հասնիլ :

« Տղայութեանս ժամանակ խոշոր եւ առոյգ էի. շատեր կ'ըսէին թէ հօրս հասակը պիտի ունենամ (երկու մէթր բարձրութիւն) : Բայց տասներկու տարեկանէս ետքը ա՛լ չաճեցայ : Ես ալ հօրս պէս թոքախտաւոր էի. երեսուն տարեկան հասակիս ամէն

մարդ կ'ըսեր թէ ա'լ չեմ ապրիր. արիւն կը թքնէի եւ ես իսկ յոյս չունէի. սակայն մարտնչեցայ եւ դիմադրեցի:

« Երբ տասը տարեկան էի, մայրս, որ աղքատ էր և ամբողջ ընտանիքին հոգն ունէր վրան, դիւ Մըլէօնի մօտերը բնակող հօրաքըրոջս քովը զրկեց: Քանի մը օր պահելէն ետքը, այս կինը ըսաւ ինծի. « — Տղա՛ս, աշխատելու ես որ կերած հացդ վաստըկիս, գնա՛, կովերը արածէ »:

« Այո՛, կովեր արածեր եմ, բնաւ չեմ ամչնար ասիկա խոտովանելու. ինծի համար պատիւ մը, փառք մը կը համարիմ այդ:

« Տասներկու տարեկանիս, Բարիզ աշակերտութեան դրուեցայ. տառաշարներ (գօմբօգիդէօն, գրաշարներուն գիր շարելու գործիքը) կը շինէի, գոր վարպետիս հաշուոյն կը ասնէի ծախելու: Այս եղաւ իմ մուտքս տպագրական արուեստին մէջ: Քիչ մը ատեն ետքը տպագրական ձեռքի մամուլներ շինողի մը քով մտայ: Այն ժամանակները մի միայն ձեռքի մամուլները կը գործածուէին, եւ ամէնէն շատ ծախուած թերթերը 4 կամ 5 հազար օրինակ տպելու համար օրերով կ'աշխատէին:

« Մտքէս իսկ չէի անցներ թէ ապագային ես իսկ անանկ մեքենայ մը պիտի շինեմ որ ժամուան մէջ 40 հազար օրինակ տպէ եւ թէ պիտի վարեմ թերթ մը որ օրական մէկ միլիոն օրինակ սպառի: Տասն եւ հինգ տարեքս թեւակոխած՝ սեւեռուն գաղափար մը ունէի. սոսկալի կերպով կը նեղանայի տեսնելով որ անգլիական մամուլներն են որ Ֆրանսայի մէջ կը ծախուին. կ'ուզէի այս մրցումը ջնջող մեքենայ մը շինել, եւ երեսուն տարիէ ի վեր Անգլիացիները տպագրական մամուլները ինէ կը գնեն:

« Իմ արհեստիս վերաբերեալ բոլոր ճիւղերուն ալ տեղեակ ըլլալ ուզեցի եւ ցուիչ ու գրաշար եղայ: Տպարաններուն մէջ յարաբերութեան մտայ Կիզօի, Թիէրի, եւ մանաւանդ Ժիրարտէնի հետ որ զիս շատ ապուշ չէր գտներ եւ յաճախ տունը կը տանէր միասին ճաշելու: Այդ օրերը մէկէն նոր լաթեր կ'առնէի վարձքով, որովհետեւ ձեռք մը հագուստ գնելու չափ դրամ չունէի:

« Երկու զաւկի տէր եղած էի երբ քսան տարեկան կ'ըլլայի. ապրուստս հանելու համար տպագրատան տառերու ձուլարանի մը մէջ գործաւորութիւն կ'ընէի: Հաւատացէք որ շատ, շատ տաժաւների բան էր: Կեանքս այսօր վարդեր ունի, սակայն իր փուշերն ալ ունեցած է: Բարեբաղդաբար յատկութիւն մը ունէի. աշխատութիւնը կը սիրէի. աշխատութիւնն է որ ինծի զօրավիգ եղաւ, եւ եթէ այսօր բան մը եղած եմ՝ աշխատութեան շնորհիւն է այդ: Ուրիշ յատկութիւն մըն ալ ունէի. քիչ կը քնանայի. ամբողջ կեանքիս մէջ գիշերները երեք կամ չորս ժամէն աւելի քը-

նացած ջշեմ. ասանկով օրը թսան ժամ կրնայի աշխատիլ. իմ յաշողելուս պատճառն գուցէ այս եղած լըլայ. մինչդեռ ուրիշ չատեր ալ որոնք ինծի չափ արժանիք ունէին՝ չկրցան իմ բաղդս ունենալ :


« 1840ին, Ժիրարտէնի հետ միասին Բրեսի կ'աշխատակցէի : Երկուք ու կէս ամիս անկողնի երես տեսած չեմ. տպագրական գործերու չարաչար աշխատելէ հտքը քանի մը ժամ կ'երկննայի տախտակներու վրայ պահ մը քնանալու համար : Ժամանակ չունէի ճաշարան երթալ ճաշելու համար՝ աման մը մսի ջուրով կը բաւականանայի : Երբեմն Ժիրարտէն, տեսնելով այս վառտակաբեկ վիճակս, կառքին մէջ կ'առնէր զիս և տունը կը տանէր : Տպագրական մեխանով ծածկուած հագուստներս կ'աղտոտէին կառքին բարձերը : Ժիրարտէնի տունը կը հաւաքուէին նշանաւոր մարդիկ՝ քաղաքագէտ, գրագէտ, արուեստագէտ եւն : Ես՝ աղքատիկ, գէշ հագուած ու տակաւին երիտասարդ՝ կը քաշուէի :

« Տիկին Ժիրարտէն սրտապնդելու համար զիս, կը ջանար երբեմն ինծի ալ խօսակցութեան խառնել, և սրահին մէկ ծայրէն միւսը կը պօռար :

« — Նայի՛նք, Իբօլիդ, քու կարծիքդ ի՞նչ է :

« Այդ վայրկենին գետնին տակը անցնիլս կուգար » :

Զ. Ն. ՊԵՐՊԷՐԵԱՆ



ԵՐԿՈՒԹՈՒԿԵՍ ՎԱՅՐԿԵԱՆ

ԾՈՎ ՈՒՆ ՄԷԶ

(ԳԻՏԱԿԱՆ ՎԻՊԱԿ)

(Շարունակութիւն 3րդ թիւէն եւ վերջ)

Ուրիշ ծովու ջուրերու հետ բաղդատելով՝ հոս գիտական ճշգրիտ տեղեկութիւն մը տալու համար ըստ վերջին տեղեկագրութիւններու՝ ըսեմ թէ Մեռեալ ծովը 25 առ հարիւր աղ կը պարունակէ, այսինքն ութը անգամը միւս ջրերուն պարունակածը : Ահա ասոր համար էր որ անմիջական ցնցում մը եւ միանգամայն ջուրի տարօրինակ հպում մը զգացի, երբ ինքզինքս ջրերով շրջապատուած գտայ, եւ կը սուզէի անդունդին մէջ :

այնչափ յամբ եւ կանոնաւոր, որչափ առանց հողմի ծովուն մակերեսը սահող նաւ մը :

Նպատակս — ինչպէս պարզեցի — տակաւ առ տակաւ խորասուզիլ եւ ծովուն յատակին ծաւալը չափելէ (եթէ կարելի ըլլար) եւ պարունակութեանը վերահասու ըլլալէ աւելի ուրիշ բան մըն էր. — Սոգոմ բլուրին վրայ փոքրիկ քննութիւն մը կատարել եւ հաստատել թէ քանի՞ դարու հնութիւն ունէր այդ ժայռը, եւ թէ իրօք Ղովտի անհնազանդ կնոջ աղի փոխարկուող արձանն էր :

Այս պահուն թեւէս կապուած չուանը սկսած էին կամաց կամաց թող տալ, եւ ասիկա առիթը կուտար ինձ սուզիլ ծովուն աւելի խորերը. կը սուզէի, բայց չէի կրնար լողալ, եւ զարմանալի ալ չէ՞ք գտներ, քանի որ վերէն, վարէն, աջէն, ձախէն եւ վերջապէս չորս կողմէն աղի ահագին զանգուածը եւ ջուրի ա՛լ աւելի պատկառելի գոյացութիւնը իրարու հետ խօսքը մէկ ըրած՝ զիս, տկար արարածս կը ճնշէին ու կը ճնշէին :

Այսպիսի հակառական պարագաներու մէջ ի՞նչպէս լողալ. ես որ ինքզինքս աշխարհի առաջնակարգ լուղորդներէ մին կը կարծէի, և այն յոյսով ու վստահութեամբ ջուրը մտած էի, այլ ես ընկճած էի. ի՞նչպէս ազատիլ այս անճողպարելի վտանգէն : Եթէ ինծի ծանօթ թէ անծանօթ ու եւ անձ ճկոյթէս բռնելով զիս մեղմիւ ծովեզերք առաջնորդէր, ո՛րչափ երջանկութիւն պիտի զգայի, և ո՛րչափ ստորին դասէն արգահատանք մը պիտի ունենայի հանդէպ այն գիտուններու՝ որոնք միշտ կը տարակուսին տիեզերքի, անոր յօրինման և Յօրինիչին վրայ, և գրեթէ միշտ ենթակայ են սոյնօրինակ վտանգներու և իրենց թանկ կեանքը կորսնցնելու :

Արագութիւնը, որով կը սուզէի, ծայր աստիճան հասած էր. որչափ ծովուն յատակին մօտենայի, ձգողական զօրութիւնը բարեկամներուս ոյժի՞ն տեղի կուտար, թէ ոչ ընկերներս չուանը պիտի բռնելու մասին անփոյթ կը գտնուէին. ոչ մին և ոչ միւսն էր : Ամբողջ քսանըվեց ժամ և երկու վայրկեան ծովու խաղաղ կեանքը վարելէ վերջ, երբ ինքզինքս բարեկամներէս չըպատուած գտայ, այն ատեն եղելութեան վերահասու եղայ. ահա թէ ի՛նչ պարագաներու տակ :

Միջոցը, որ զիս իրենցմէ կը զատէր՝ անծանօթ էր իրենց, անտեղեակ էին նաեւ խորութենէն, որ երեւակայել իսկ անհնար էր գէթ իրենց համար, միեւնոյն ատեն գուշակելով որ չուանը 12-16 մանրերկրորդէն պիտի հատնէր, փութացեր էին զայն հանգոյցով մը ուրիշի մը կցել, և ահա չուանը անկարող եղեր էր այլ եւս իրեն վստահուած անգին բեռը վերցնել. այն երկու

չուանները, որոնց միացումը մանրերկրորդի մը մէջ տեղի ունեցեր էր, նոյնպէս իրենց բաժանումը վայրկեանէ մը շատ ու շատ կարճ ժամանակամիջոցի մէջ վրայ հասեր էր:

Ասկէ վերջ ինծի ընելու ուրիշ բան չէր մնացած բայց եթէ խորասուզիլ այնչափ արագ որչափ ճնճողակները կը թռչին օդին մէջ. և մէկէ աւելի պատճառներ ունէի խորասուզելու: Նախ՝ աղի ջուրի մէջ լողալու անվարժ ըլլալս. երկրորդ՝ և մեծ պատճառ՝ անիծեալ չուանին կտրիլը. երրորդ՝ ջուրին ահագին ճնշումը. եւ վերջին պատճառ մը՝ կեդրոնաձիգ գորութիւնը, որ քանի յատակին մօտենայի, այնչափ սիրալիր հիւրընկալութիւն մը կը գտնէի կարծես իրմէ:

Բայց խորասուզելու աւելի պատճառներ չունէի՞. — Կարելի էր: Իմ այս սոսկալի եւ անձուկ վիճակիս մէջ չի վարանեցայ պահ մը խորհիլ, որուն իբր արդիւնք սա եզրակացութեան յանգեցայ. արդեօք փրկութեան մանեակը գոնէ այս վայրկեանիս համար անպէտ գործի մը չէ՞ր. ի՞նչ բանի պիտի ծառայէին նմանապէս ապակեայ դիմակը՝ որ գանկս ամբողջ բանտարկած էր եւ շնչառութեան այն ահագին խողովակը որ միւս գործիներուն հետ մարմնոյս ծանրութիւնը զգալի կերպով աւելցուցեր էր: Ուստի բնականօրէն հետեւեցնել թէ առանց մանրերկրորդի մը չափ վարանում մը ունենալու անմիջապէս նետեցի զանոնք — փրկութեան մանեակը, ապակեայ դիմակը եւ շնչառութեան խողովակն եւ այսպէս ազատած եղայ ջուրին մէջ գրեթէ մարմնոյս կիսուն հաւասար ծանրութենէ մը, որ վրաս կը կրէի:

Աս ընելէ վերջ նորէն կը խորասուզէի, երբ յատակէն յանկարծ 193 մէթրի չափ վեր յորձանք մը տեսնուեցաւ, այնչափ վեր ելաւ, մինչեւ որ ինձ հասնելով՝ զիս ալ իր հետը մեղմիւ վեր մակերեսը բարձրացուց: Երբ մակերեսին մօտեցայ, այս պահուն ծովուն մէջ շատ տեսակ կենդանիներ եւ բոյսեր տեսայ, շատ կենդանիներու նախապատմական մնացորդներ, որոնց վրայ ապագային ընդարձակ տեղեկութիւններ պիտի տամ, եթէ առիթն ինձ չպակսի: Որայն սաչափն ըսեմ որ երբ ծովուն երեսն ելայ՝ մերթայն՝ մերթ այն կողմը տատանող եւ միշտ ընկղմելու վտանգին ենթարկուող նաւու մը կերպարանքն առած՝ խօլ ափնարկներ կը նետէի շուրջս, հարաւայիւ կողմը ծովեզրին մօտ աղանիններու, բազէներու, կաքաւներու, ճագարներու եւ լողացող բազերու խումբ մը տեսայ, որոնց՝ մարմարիոնի գոյնին շատ մօտ նմանութիւն մը ունենալուն՝ ինձ այնպէս թուեցաւ թէ բրածոներ էին հազարաւոր տարիներ առաջ ապրող կենդանիներու. տեսայ նաեւ տեսակէ մը բոյս, կուպր անուամբ, ուսկէ գաւաթներ, խաչեր եւ

ուրիշ դարձեր շինելով Երուսաղէմ գացող ուխտաւորներու կը վաճառուին :

Յորձանքը դադրած էր. ես ալ անգութ բաղդին խաղալիք եղողի մը պէս յուսահատ վիճակ մը առած նորէն կը խորասուզէի : Արդեօք Ղովտի կինը հոս զիս ալ իրեն պէս պիտի անշնչացնե՞ր . արդեօք Մեռեալ ծովուն մէջ մեռնելո՞ւ համար մտած էի : Այսպիսի խորհուրդներով տոգորուած երբ վերջին ճիգ մը կ'ընէի ծովեզրին մօտենալու, Մեռեալ ծովն ամբողջ սարսեցաւ . ի մեծ զարմացումի ինձ եւ ինծի նման իր մէջը գտնուող անթիւ կենդանիներու . եւ ահա մեծ երկրաշարժ մը — յանկարծադէպ այսպիսի վայրերու մէջ — զգալն նոյն իսկ ջուրին մէջ, այնպիսի դղրդումով սարսեց ջուրն եւ զիս որ անզգայ վիճակ մը ստացայ . նոյեմբերի 29ի արշալոյսին հազիւ հազ ամփեւելով ինքզինքս բարեկամներէ չըջապատուած գտայ : Թէ ի՞նչպիսի բուռն ոյժ մը եւ թաքուն զօրութիւն մըն էր որ զիս ծովեզրը նետեց, այդ մասին լուռ կը մնամ, որովհետեւ այդ պահուն շնչասպառ վիճակի մը մէջ պիտի գտնուէի :

Ս. Կ. ՄԱԹԻԿԵԱՆ

ԱՂՔԱՏ ԸՆՏԱՆԻՔՆ

Չեմ գիտեր ընտանիք ըսեմ թէ ընտանիքի մը փշուրները, մնացորդները այն զառամ մօրն ու մատղշուկ աղջնակին, դեռ հազիւ 12 տարեկան, որոնք միշտ կը տեսնեմ ճամբուս վրայ :

Տունը, չէ՛ խղիկը, որովհետեւ շուներու խշտիկները այդ ցախէ ցուիքներով, ճեղքերը թղթուած դուռով ու անպատուհան գետնափորէն շատ աւելի նախանձելի են, հաւնոց մըն է — բառին բովանդակ նշանակութիւնով — մինակ թէ հաւնոցէ մը սա առաւելութիւնն ունի որ, խոնաւ է :

Դռնակը բաց է միշտ կրնկին վրայ ու անոր առջեւ նստուկ՝ ցնցոտիներուն մէջէն կմախք մարմինը երեւցող պառաւը, պատուած, սեւ եազմա մը գըտըխին (ծնօտ) տակէն հանդոյցած, որուն ծակոծուկերէն կ'երեւին ճերմակ մազերը խըլըռ խըլըռ վար թափած կեղտոտ վիզին բոլորտիքը. այդ գգոտած մազերը հակառակ իրենց տարիքին, սիրահար երիտասարդի մը բուռն մարմնովը կարծես կը պլլուին անոր վիզին շուրջ . կ'զգա՞ն արդեօք թէ մերկ վիզի մը մէկ մասն է որ կը պաշտպանեն :

Առտուն, արշալոյսին հետ հո՛ն է ան, դռնակին առջեւ կը ծ-

կտած, յաճախ իր խեղճուկ որբուկն ալ իրեն քովիկը իրեն պէս Անօթութեան ու պաղին դէմ մէկտեղ կը մաքառին այս խեղճերը. բայց ի՞նչ կ'ըսեմ. մաքառողմ է միթէ թէ անձնատուր ըլլալ. . . բայց նօթութիւնն ու ցուրտն ալ իրենց կարգին չունին երբէք վեհանձնութիւն, կը մտնեն այն պատուհաններէն որոնք չեն կըրցած թղթուիլ, կը խայթեն անոնք որ մերկ են ու տխուր. մէկը չի զգար ու իր բոլոր անխղճութիւնովը կը գալարէ աղքատին աղիքները, միւսը չի խղճար, ու իր բոլոր կծութիւնովը կը խայթէ մերկին մարմինը:

Սշտիկէն ներս մտնենք, հո՛ն խոնաւութեան պէս թանձր լուծութիւն մը ու տխրութիւն մը կը տիրէ. երեք պատերը տամկութենէ հողփեր, չորրորդը չային վրայ բացուող փտտած տախտակէ անսեմ դուռն է արդէն, ուրկէ ձմեռը ձիւնն ու բուքը ներս կը խուժեն ու գարնան՝ հեղեղաւորն աղտոտ ջուրը ներս կ'արշաւէ մեծ քաջագործութեան մը յաւակնոտութիւնով. խուրձ մը բրնձխոտ իբր անկողին, ահա ամբողջ ընտանեկան կարասին այս տունին. կապ մը որթոտ, ու հինգ հատ փտորտուք կշկուր, ահա բոլոր վառելիքը. . . ուտելիք չունին երբէ՛ք, դրացիներէն տրուած կտոր մը չոր հացն կ'ուտեն, իսկ պահեստի համար ոչինչ:

Ձեռն ուզեր, չեն մուրար. եթէ մէկը կտոր մը հաց տայ, կը պագնեն գլուխնուն կը դնեն. չտալու պարագային անօթի նայուածքով մը կը ճգոհանան:

Յորեկները մինչեւ իրիկուն, կարեկցութիւն խնդրողի այդ դիրքով կ'երեւան անցորդին, իսկ գիշերները, է՛հ, ո՞վ գիտէ գուցէ մինչեւ լոյս պարապ փորով կուլան այս աղքատ հոգիները:

Ամառն է մինակ ասոնց ու ասոնց նմաններուն բարեբարը, ամառը իր արեւով, ամառը իր պտուղներով և ուտելի ու ոչուտելի խոտերով. ան ցորեկը արեւն ունի անոնց բարեբար ու գիշերը լուսնկան. իսկ ձմեռը անոր հակառակ կրկնակ անգութ է աշխարհի այս լքուածներուն հանդէպ. ամէն զրկանքներովը չի գոհանար կարծես ու լլկանքի վերջին աստիճանին հասցնելու համար աս խեղճերը, իր ձիւնաբեր, թուխ ամպերովը կը ծածկէ շուրթ կապոյտը երկինքին ու դժբախտներու միակ մխիթարիչ, յոյսի ճրագ՝ լուսնկան ալ կը քողարկէ:

Պղտիկը, տեսեր եմ զինքը յաճախ, նիհար, վտիտ մոմ մը համակ, դեղնած ու փոսն ինկած այտերով, մարմրուն, անփայլ աչքերով, թոքախտաւոր սիրահարի մը մանրանկարն, որուն փայլը անգուանդին եզերքն է արդէն: Տեսեր եմ զինքը, իրեն տարեկից ընկերուհիներուն հետ քիչ անգամ, — որովհետեւ այս պղտիկները իրենց պղտիկ կուրծքին տակ անպատուութեան խայթ

մը կ'զգան զայն իրենց ընկերուհի համարելով — իսկ իրմէ պըզտիկներուն հետ յաճախ:

Իրմէն շատ աւելի պզտիկներ, որոնց սպասուհին է ու բոլորտիքը դարձող, քծնող շունը (թող ներուի նմանութեան) որ պոչը կը շարժէ միշտ, աչքը պատառ մը չոր հացին տնկած, քանի որ այդ մանտրտիկ արարածներուն իւրաքանչիւրին ձեռքը կտոր հաց կայ, զոր անգիտակ մանկիկներ կը կրծեն առանց փշուր մը հանելու իրենց անօթիին:

Միթէ մահը աւելի դա՞ռն է քան այն անօթի հայեացքներուն ու բռնազբօսիկ ժպիտներուն դառնութեան զգացումը:

Ուրիշներու սեղանին աւելցուքներովը, թուքի ցափուտութենէրով շաղուած, փորը լեցնել, ուրիշներու հնոտիներովը ծածկել կմախք էութիւնը, ամէնէն խորունկ ցաւով համակուած ատենը դառն ու բռնազբօս ժպիտով համակերպիլ իր շուրջիներուն, ամենէն ստորին հոգիներու պաղատական կոյս հայեացքներ ցանցընել ու զգալ ասոնց դառնութիւնը, զգալ. բայց սոսկալի է աս Աստուած իմ:

ԽԱՆԻՔ

ՉԻՆԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ

Խնդութեանց, խնճոյքի եւ զուարճութեանց ատեն դժուարին խնդիրներ առաջարկողը՝ փոխանակ հասարակաց ուրախութեան մասնակից ըլլալու, իր մտքին կատարելութիւնը կամ իր հմտութիւնն երեւցնելու ջանացողը, ձանձրալի ու անտանելի է ընկերութեան, եւ իր քաղաքավարութեան պակասութիւնը կը ցուցնէ:


— Մարդուս կարողութիւնը շատ չափաւոր է եւ համբաւի կողմանէ ունեցած յաջողութիւնները շատ թեթեւ են: Ո՛չ երբէք կրնայ ամենուն գովեստն ընդունիլ. ո՛չ երբէք պախարակողներուն ձայնը լռեցնել. ո՛չ կրնայ ինքն իր անձին տուած պարսաւանքներէն ազատ մնալ: Քիչ պակասութիւն ըրէ, կ'ըսէին հիներէն իմաստնագոյները:

ԿՈՍՓԻԿԻՈՍ


Aberration

քաղաք մը Միացեալ Նահանգաց մէջ (Միսիսիբիի նահանգին մէջ) Կոմսութիւն մը Աւստրալիոյ Քուինսլանտի նահանգին մէջ և գաւառ մը Քանաւոական Տօմինիոնի մէջ:

Aberration, Ծեղում. — (Տիեզերագ.) Լուսաւորներու խոտորում կ'ըսենք այն երեւոյթին որով երկնքի լուսաւոր մէկ կէտը իր գտնուածէն տարբեր ուղղութեան մը մէջ կը տեսնենք: Լոյսին այդ կէտէն մինչեւ մեզի գալու համար վատնած ժամանակը եւ երկրիս թաւալման արագութիւնը տեղի կուտան այդ երեւոյթին զոր 1727ին անգլիացի Պրէտլի նշանակած է առաջին անգամ: Երկիրս երկու տեսակ շարժում ունենալով (մին՝ արեւուն շուրջը թերատ մը գծելով և միւսը՝ իր առանցքին վրայ դառնալով) երկու տեսակ խոտորում տեղի կ'ունենայ. մին Տարեկան և միւսը Օրական: — Տարեկան խոտորում. Ենթադրենք որ դիտող մը երկրիս Ա կէտին վրայ կենայ (Պատ. 1) և դիտակով մը փորձէ որոշել Կ լուսաւոր կէտին դիրքը. Եթէ երկիրս անշարժ և հետեւաբար Ա կէտն ալ հաստատուն ըլլային, պիտի բաւէր դիտակը ԱԲ ուղղութեան մէջ դնել: Եւ այնպէս որ Կ կէտին պատկերը դար կազմուիլ դիտակին ցանցիկին մէջտեղը. այն ատեն հեռագէտին ԱԲ առանցքը ճշդիւ պիտի ցուցնէր Կ կէտին ունեցած դիրքը՝ դիտուած պահուն: Սակայն լոյսը դիտակին ԱԲ երկայնութիւնը



Պատ. 1



Պատ. 2

կտրելու համար ժամանակ կ'անցնէ և այդ ատենուան միջոցին երկիրս կը շարժի իր հետ տեղափոխելով դիտակը և անոր ցանցիկը. դիտակը կուգայ Ա'Բ' ուղղութեան մէջ և ցանցիկին ալ Ա' կէտին վրայ: Հետեւաբար դիտողը պիտի տեսնէ լուսաւոր կէտը չէ թէ Կ ի վրայ հապա Կ ի տեղ (Պատ. 2): Ըսել է Կ կէտին դիրքը ճշդիւ որոշելու համար դիտակը Կ ի վրայ ուղղելու չէ հապա անանկ ուղղութիւն մը տալու է որ ԱԿ ուղղութեան հետ որոշ անկիւն մը ձեւացնէ, Ենթադրենք որ լոյսին ճառագայթը դիտակին Բ ծայրին մէջ թափանցած ատեն դիտակը Ա'Բ' ուղղութիւնը առած ըլլայ. լոյսը ԲԱ' ճամբան կտրած միջոցին՝ երկրիս հոլովական շարժումը՝ ինչպէս վերը ըսինք՝ ցանցիկը Ա կէտին


Aberration

վրայ կը տանի և դիտակն ալ ԱԲ'ի վրայ: ԲԱ եւ ԱԱ" երկայնութիւնները համաչափ չեն լոյսին ու երկրիս տեղափոխութեան արագութեան հետ, հապա անոնց համեմատական են. հետեւաբար եթէ ԱԵ գծին վրայ առնենք ԱՕ երկայնութիւնը որ լոյսին արագութիւնը կը ներկայացնէ և Օ կէտէն ալ առնենք ՕՄ գիծը՝ հաւասար և զուգահեռական երկրիս հոլովական շարժումին, կ'ունենանք ԱՄ ուղղութիւնը զոր տալու է դիտակին Կ լուսաւոր կէտը տեսնելու համար ցանցիկին վրայ. դիտողը կը տեսնէ այդ կէտը Կ'ի վրայ մինչդեռ ան Կ կէտին վրայ կը գտնուի իրօք: ԿԱԿ' անկիւնին իրարման անկիւն կ'ըսուի. այս անկիւնը շատ պզտիկ է, միջին հաշուով 70', 45 է, որովհետեւ ՕՄ երկայնութիւնը՝ բաղդատմամբ ԱՕի՝ խիստ փոքր է. երկրիս հոլովական շարժումը, զոր ՕՄ կը ներկայացնէ, 29,537 քիլոմէթր է մէկ երկվայրկեանի մէջ, մինչդեռ լոյսին արագութիւնը՝ որով կը համապատասխանէ ԱՕ, 300,000 քիլոմէթր արագութիւն մը ունի: — Օրական խոսքում. երկիրս արեւուն շուրջ ունեցած շարժումէն բոլորովին անկախ՝ իր առանցքին վրայ թաւալական շարժում մըն ալ ունի որ 24 ժամուան մէջ կը կատարուի: Ենթադրենք որ լուսաւոր կէտ մը դիտուած պահուն միջորէականի մակարդակին վրայ գտնուի. արդ երկիրս արեւմուտքէն դէպի արեւելք շարժելով իր հետ պիտի տեղափոխէ նաեւ դիտողը եւ լուսաւոր կէտէն մեկնող ճառագայթը դէպի արեւելք նետուած պիտի երեւի եւ լուսաւորին դիրքն ալ իր ունեցած առերեւոյթ դիրքէն ալ աւելի արեւելեան կողմը պիտի տեսնուի: Հետեւաբար, եթէ այդ լուսաւոր կէտը՝ միջորէականի մակարդակէն Բարձրագոյն անցնէ է որ կը կատարէ՝ տակաւին այդ մակարդակը չի կտրած՝ մենք պիտի տեսնենք որ կ'անցնի հոնկէ, իսկ եթէ Ստորին անցքն է կատարածը՝ անցնելէն ետքն է որ պիտի նշմարենք որ կ'անցնի:


(Բնագիտ.) Տեսարանական երեւոյթ մըն է որ յառաջ կուգայ ոսպնեակներու, հայելիներու մէջ առարկաներու պատկերներուն յստակ ու նման չկազմուելէն: — Գնահատութեան խոսքումը կը կայանայ սա իրողութեան մէջ որ զուգահեռական եղող կամ մէկ կէտէ մը մեկնող լուսեղէն ճառագայթներ՝ գնտածեւ մակերեւոյթ ունեցող հայելիի մը կամ ոսպնեակի մը հանդիպելէ ետքը՝ չեն երթար ճշդիւ միեւնոյն կէտին վրայ հաւաքուիր: Օրինակի համար, ենթադրենք որ հարթ կորնթարթ ոսպնեակի մը երեսին վրայ իյնայ գլխաւոր առանցքին զուգահեռական լուսաւոր ճառագայթներու խումբ մը: Թո՛ղ Վ ըլլայ ոսպնեակին վառարանը, (Պատ. 3) այսինքն այն կէտը ուր տեսականօրէն հաւաքուելու են ոսպնեակին մէջէն անցնող բոլոր ճառագայթները: Իրականին մէջ շատ քիչ ճառագայթներ միայն, անոնք որ ոսպնեակին գլխաւոր առանցքին շատ մօտիկ են Բ և Գ, կը հաւաքուին այդ կէտին վրայ. ոսպնեակին ամէնէն ծայրէն անցնող ճառագայթները Ա և Դ կ'իյնան աւելի ներսօք Վ կէտին վրայ. իսկ Աի և Բի, Գի եւ Դի մէջտեղ գտնուող ճառագայթները՝ առանցքը կը կտրեն ՎՎ միջոցին վրայ: Ծառագայթներու այս խտտորումին պատճառաւ

Aberration

ոսպնեակին վառարանին վրայ կազմուած պատկերը պզտոր կ'ըլլայ: Այս անպատեհութեան առաջըր առնելու համար րսպնեակին միմիայն կեդրոնական մասը կը գործածեն՝ եզերքները ծածկելով: Կարելի է նաեւ այդ պակասութեան առաջըր առնել գործածած ոսպնեակը քանի մը կտորներէ շինելով: — Գունակաւ խոտորումը միմիայն ոսպնեակներու յատուկ է: Ինչպէս գիտենք, ճերմակ լոյսը բազկացած է եօթը գոյներէ. այս գոյները բեկբեկիչ միջավայրէ մը անցնելէ ետքը հաւասար չափով չեն բեկանիր. կարմիր գոյնը ամենէն քիչ կը բեկբեկի, իսկ մանիշակագոյնը ամենէն շատ. մնացեալ գոյները այս երկուքին մէջտեղ չափ մը ունին: Ըսել է, եթէ ճերմակ լոյսի Ա խուրձ մը (Պատ. 4) ոսպնեակի մը մէջէ անցնի՝ զինքը կազմող զանազան գոյնով ճառագայթները տարբեր չափերով պիտի բեկբեկին՝ մանիշակագոյնները պիտի հաւաքուին Մ կէտին վրայ, իսկ կարմիրները Կի վրայ, եթէ թերթ մը թուղթ բռնենք Մ կէտին վրայ, մանիշակագոյն կէտ



Պատ. 3



Պատ. 4

մը պիտի կազմուի հոն՝ չըջապատուած կարմիր բոլորակէ մը. իսկ եթէ Կի վրայ փոխադրենք թերթը՝ կարմիր կէտ մը կ'ունենանք մանիշակագոյն չըջանակով մը: Իսկ Դ թերթին վրայ՝ ուր մանիշակագոյն և կարմիր ճառագայթները զիրար կը կտրեն. կը կազմուի չըջանակ մը ծիրանի գօտիի գոյներով: Այս խոտորումին անպատեհութիւնն է ոսպնեակին մէջէն կազմուած պատկերներուն շուրջը գունաւոր չըջանակ մը ձեւացնել: Այս պակասութեան առաջըր կ'առնուի միակտուր ոսպնեակ մը գործածելու տեղ՝ տարբեր բեկբեկիչ զօրութիւն ունեցող երկու կամ աւելի զանազան նիւթերէ շինուած և իրարու քով փակած քանի մը ոսպնեակներ գործածելով: Սովորական դիտակներու մէջ դրուած իւրաքանչիւր ոսպնեակ կազմուած է երկու ոսպնեակներէ որոնք փխթ և քառուկլաւ ըսուած ապակիի տարբեր տեսակներէ շինուած են:

Ablette, Լսնաձուկ. — Այս ջուկերուն միակ շահեկան տեսակը սովորական Լսնաձուկն է որ հազիւ 15 սնդմ. երկայնութիւն կ'ունենայ: Եւրոպայի բոլոր գետերուն ու ճահիճներուն մէջ առատօնէն կը գտնուի: Մարմինը ամբողջովին ծածկուած է նուրբ թւփերով որոնք դուրաւ կը բրցուին: Կանաչորակ կամ պողպատի կանաչոտ գոյն մը ունի կռնակին վրայ, իսկ կողերը խիստ փայլուն արծաթագոյն են: Այս ձուկերը միշտ մեծ խումբեր կազմած կ'ապրին, ջրի երեսին մօտէն կը լողան. բնաւ վախկոտութիւն

Abondance — Abordage

շունին եւ հանդիպած առարկանին կլլել կը ջանան: Մայիսի կամ Յունիսի մէջերը կ'ածեն հաւկիթնին զոր կը տեղաւորեն ջրային տունկերու վրայ. չափազանց շատ կ'ածին, բայց մեծ ձուկերը եւ որսի թռչունները միշտ կ'ստան զանոնք: Լսնածուկին միտք փուշերով լեցուն ու գարշահամ է. ուրիշ ձուկերու կարթերը խայծելու կը գործածուի: Այս ձուկը կ'որսան մեծ քանակութեամբ իր թեփերուն համար. անով է որ կեղծ մարգարիտներ կը շինեն: Դանակով մը մարմինն վրայէն կը քերթեն թեփերը, և կը փշրեն, արծաթազօծեալ փոշի մը յառաջ կուգայ. ամօնիաքով կը լուան և ձկան սոսինձով կ'որսեն այդ փոշին և կ'ունենան հեղուկ զանգուած մը որու խիւղիթին արեւելեան անունը կուտան: Այս հեղուկն է որ ապակի... խիտ նուրբ գնդիկներու մէջ դրուելով կեղծ մարգարիտներ կը ձեւացնէ: 36էն 40 հազար ձուկ պէտք է մէկ քիլոկրամ խիւղիթին արտադրելու համար որովհարձէքը մէկ օամ. ոսկիի մօտ է:

Abondance, Առատութիւն, նոխարութիւն. — (Քաղ. Տնտ.) Առատութիւնը հակառակն է Սովին ու Նուազութեան եթէ այս բաները բացատրեն մատուցումի և խնդրանքի օրէնքներուն ծայրագոյն հետեւանքը: Երկրագործական արտադրութիւններու առատութիւնը ամէնէն աւելի բնական պատճառներէ յառաջ կուգայ, մինչդեռ ճարտարարուեստի նիւթերու առատութիւնը պարզապէս արտադրութեան շատութենէն է, որով առաջինը կրնայ բարիք մը նկատուիլ մինչդեռ վերջինը տագնապի աղբիւր կը բանայ եթէ շատ ըլլալովը աժան և լաւագոյն պայմաններու տակ չարտադրուիր: Առատութիւնը և նուազութիւնը մինչեւ աստիճան մը զիրար կը չեզոքացնեն՝ հեռաւոր կէտերու մէջ փոխադրութեան դիւրութիւններու պատճառաւ: Սակայն այս հաւասարակշռութեան արգելք կրնան սեպուիլ ամէն երկրի մէջ ներածուած կամ արտածուած ապրանքներու վրայ դրուած մաքսերը:

(Գրագիտ.) Բառերու, ազնիւ դարձուածքներու շատութիւն մը՝ արտայայտելու համար գաղափարներու, զգացումներու եւ պատկերներու ներութիւնը: Այս բանը կը նշանակէ նաեւ արտայայտութեան պէսպիսութիւն, առգաբանութեան դիւրութիւն:

(Դիցաբ.) Առատութիւնը այլաբանական աստուածութիւն մըն որ չէ ունեցած իրեն յատուկ տաճար մը, հակառակ հարստութիւն, առողջութիւն ներկայացնելուն իր կայտառ երեւոյթովը և ծաղիկներով պտուղներով լեցուն եղջիւրներովը զոր ձեռքին մէջ կը բռնէ: Առատութեան այս եղջիւրը, ամենէն շատ ընդունելութիւն գտած աւանդութեան մը նայելով, Արամազդի սնուցիչ այծին Ամալթէի մէկ եղջիւրն է:

Abordage, Ընդհարում. — Հին ատենները ծովամարտի ժամանակ նաւ մը ճանկերու միջոցաւ կը կառչէր թշնամի նաւու մը եւ անոր մէջ խուժելով կը ջանար գրաւել զայն: Հիմակ այդ տեսակ բան մը անկարելի է մարտանաւերու պաշտպանողական միջոցներուն վերջին ծայր կատարելագործեալ ըլլալուն համար:

Կ Ե Ս Ա Ն Ք Ը

Կը ծագէ արփին եւ աշխարհ համայն

Գեղազարդ

Պըննի վերսին եւ կենդանան

Վաղազարդ

Երամն ու հօտեր . ծրծեն աւօտին

Կենսաբեր

Բուրմունքն ու հոտեր որք վերեն ասդին

Են քափեր :

Եւ անհունին մեջ , ուր կայծեր անքիւ

Հրավառ

Թաւալին անվերջ , անդուլ , գիտեր տիւ

Մշտավառ .

Ուրկէ կը ծորէ կեանք համբունին

Անդադար

Եւ գոյացութիւնք այսպէս կը պահուին

Անվրբար :

Հոն դաւտերուն մեջ ուր վրնիս առուակ

Գեղափայլ

Կ'ոռոգէ մարգերն , կեանք կուտայ համակ

Անմրուայլ ,

Ծաղկին քաւուտներ , ծառեր երփներանգ

Կը պննին

Տան անուշ միտքեր բուրմունք ու պերճանք

Բընաւին :

Եւ սա խուցին մեջ , հոն սալօնին մեջ

Խայտաղին

Կեռայ շարժումը , հոն զեռումն անվերջ

Կայ կեանքին

Թե մանչ քէ աղջիկ . ծեր երիտասարդ

Խրմբովին

Կ'ըմբոխնեն սերը , հեշտանք գուարք

Գորովին :

Մաղնիսա

Գ. ԷՕԼՄԷՋԵՈՆ

ՏԱՐԻ ՄԸ ՍԱՌՆԱԿՈՅՏԻՆ ՎՐԱՅ

(Շարունակութիւն Չրդ Թիւէն եւ վերջ)

Ի՛նչչափ սրտագրաս է այն պատմութիւնը զոր Քանեի կ'ընէ : Սառերու անսահման դաշտին մէջ, ինք ու ընկերները, առանց մարդկային օգնութեան մը յոյսին, ստիպուած էին քալել ձիւնին ու փոթորիկին դէմ 45 աստիճան ցուրտով մը : « Ճաշը պատրաս-



Բեւեռային երկիրներու բնակիչ մը (նսփմացի)

տած ժամանակս, կը պատմէ ան, լամբարին երկաթին դպցուցի մերկ ձեռքս. անմիջապէս երկու մատներս սառեցան. անխոհմութեամբ քիչ մը ձիւն առի ափերուս մէջ և ձեռքերս չփեցի, մինչեւ դաստակներս կաս կոպուտ կտրեցան : Բեթիժաքս կանչեց տոբթորը և երկուքն ալ ձեռքերս ուժով ու երկարատեւ չփելով աղատեցին մատներս : Ուրիշ անգամ մը, անցք մը փնտռած պա-

հուս մինչեւ կէս մէջըս ջրով լեցուն փոսի մը մէջ ինկայ. եղերքներուն կառչելով խեղդուելէ ազատեցայ, բայց հազիւ թէ ոտքի կեցեր էի, սրունքներս չընկալաւորեցան սառի ծածկոյթէ մը. ջուրը բանթալօնէս ներս չթափանցած՝ սառեր էր:

Ամէն օր մէյժմէկ նոր դժուարութիւններ կ'ելնէր խուզարկուներուն առջեւ: Նախ յարատեւ ձիւնի փոթորիկներն են, որոնց սաստկութեան միջոցին անկարելի էր ցերեկուան լոյսով երկու մեդր հեռուն տեսնել: Շատ անգամ վրաններուն ետին ապաստանին իսկ չէր բաւեր փոթորիկին սաստկութենէն պաշտպանուելու համար, հարկ կ'ըլլար կաշիէ տոպրակներու մէջ պարտեկուիլ:

Ուրիշ վտանգ մըն ալ կը ձեւացնէն ամէն քայլի՝ ոտքերուն տակ բացուող ճեղքուածները, որոնք ակնթարթի մէջ կը լայնանան, կը խորունկնան, վիհ մը կը պեղեն: Անգամ մը բալխիրներէն երկուքը ճեղքուածքի մը վրայէն անցեր էին, երրորդը կառչեր կը մնար, չուաններով կապեցին զայն եւ սկսան քաշել. սակայն ճեղքուածքը երթալով կը լայննար, շուները ջուրին մէջ գլորեցան, բալխիրն ալ ետեւնուն երթալու վրայ էր, երբ բարեբաղդաբար, սրածայր ժայռի մը կառչեցաւ եւ անդունդին վրայ կախուած մնաց, մինչդեռ շուները չուաններէն քաշուած կը տապալելէին ջուրին մէջ՝ խեղդուելու վրայ: Եթէ այդ բալխիրը կորսուէր՝ ամբողջ ձեռնարկը վիժած կ'ըլլար. պիտի ստիպուէին ետ դառնալ, որովհետեւ պաշարներու կէսն անոր մէջ դրուած էր: Ամէնքը մէկէն ձեռք ձեռքի տուած գործի սկսան եւ դիւցաղնական ջանքերու շնորհիւ հազիւ թէ կարողացան ազատել բալխիրն ու շուները:

Անդունդի մը մէջ գլորելու վտանգէն ետքը կուգայ հովերէն քշուելով իրար զարնուող երկու սառնակոյտերու մէջտեղ ճզմուելու վտան:

Բայց այս մարդոց քաջասրտութիւնը անսահման է, քանի դիմագրաւելիք վտանգը շատնայ՝ այնքան ալ կ'աւելնայ ան և մինչև դիւցաղնութեան կը հաւասարի: Ապրիլ 21ին 85⁰ 30՝ հասած են. դէպի բեւեռ ճամբանին շարունակելու համար հարկ պիտի ըլլայ օրական ուտեստին նուազեցնել: Քանի՜ ընկերներուն կարծիքը կը հարցնէ. առանց տատամսելու ամէնքն ալ կը յայտնեն թէ յառաջ քալել կ'ուզեն: Ապրիլ 25 չորեքշաբթի օրն՝ անցած են 86⁰ աստիճանէն: Օդը սքանչելի է. խուզարկուներուն եռանդը չէ պաշտ: Սակայն Քանի կը նայի որ անկէց հեռուն երթալն՝ իրական մահը դիմագրաւել էր: Ձիւնին վրայ կը զետեղէ իրարու մէջ անցած երեք թիթեղեայ առփ, որու մէջ դրուած է հետեւեալ

բովանդակութեամբ տոմսակ մը. « 25 Ապրիլ 1900. լայնութեան աստիճան 86° 34': Երկայնութիւն՝ 68°. Արեւելք Կրիկուիչ: Դէպ ի հիւսիս այս ծայրագոյն կէտին հասնելով, ես կը դառնամ 30 օրուան պաւարով, 4 բալիւրով եւ 34 շունով: ՔԱՆՆԻ »:



Դարձը սկսաւ բաւական լաւ պայմաններու մէջ: Սակայն մտաւ տանջութեան սրտոճառները չէին ուշանար յայտնուիլ: Դէպի յառաջ քալած ատեննին, անծանօթին սէրը կը քաշէր զիրենք, եւ կրած յոգնութիւննին կը մոռնային. իսկ հիմա չէին կրնար դիմանալ հազարումէկ տառապանքներուն որ կարծես ճամբուն վրայ

ցանուած էին, Քանեի ամէնէն շատ տառապեցաւ. մէկ մատը ամբողջովին սառեցաւ, եւ հարկ եղաւ դանակով մը կտրել զայն: Օր մը ճամբան կը դժուարանար. երկու ժամ չարաչար յոգնելէ ետքը հազիւ թէ երկու մղոն տեղ կը յառաջանային: Բալխիբնէ-րուն գծած ճամբաները աւրուած են եւ խումբը գրեթէ միշտ կը մոլորի: Ամբողջ օր մը տաժանելի ճամբորդութենէ մը ետքը յուսահատութեամբ կը տեսնեն որ ակամայ դարձուածքով մը մեկնած կէտերնին եկեր են: Կարաւանը՝ ամենաչնչին մէկ առիթը պատճառ կը բռնէ կանգ առնելու:

Մարդերը՝ թմրած երեւոյթ մը ունին, շարժումնին դանդաղ է: Նիւթական յոգնութիւններէ աւելի՝ բարոյական այս խոնջէնքն է որ հրամանատարին ահ կ'ազդէ: Մայիս 20ին ընդհանուր ցուցակ մը կը շինեն. պաշարնին հազիւ 15 օր եւս կրնայ տեւել. բէթրօլի վերջին սնտուկնին կը բռնան:

Հիմա հասած են պղտիկ սարահարթներու վրայ, որոնք անհամար ջրանցքներով իրարմէ բաժնուած են. այս՝ ջրանցքները սառույցի բարակ խաւով մը ծածկուած են, որոնք ամէն քայլի կրնան խորտակուիլ: Քանի բարեխառնութիւնը կը բարձրանայ՝ ջուրը ամէն կողմէ կ'սկսի երեւիլ: Յառաջանալու համար սառի կտորի մը վրայէն ուրիշի մը վրայ ցատքելու է. կը կարծեն թէ ամուր սառնակոյտի մը վրայ կեցած են եւ մէկէն ի մէկ սառը կտոր կտոր ըլլալով բանտուած կը մնան 20 քառակուսի մէթր տարածութեամբ սառէ լտտի մը վրայ:

Վերջապէս Յունիս 9ին ժամը 3ի ատենները Բեթիթաքս հաստատուն հողը նշմարեց. Ռօտօլֆ կղզիին հարաւային կողմը գտնուած կղզեխիւներ են ասոնք, Սրունքներու ծանրութիւն, պարապ ստամոքսի ցաւ, ծարաւի տանջանք, ամէն բան կ'անհետանայ: Նոր եռանդով մը կ'իյնան ճամբայ եւ հինգ օր ետքը այդ կղզիներէն մէկուն վրայ ոտք կը դնեն: Տղու մը ուրախութիւնը կը զգան այդ խոշոր մարդիկը հողը չօշափելով. ամէնէն բարձր մէկ կէտին վրայ կ'իլլեն եւ չորս կողմը կը դիտեն. հեռուէն կը նըշմարեն Ռօտօլֆ կղզիին մէկ հրուանդանը: Հոն հասնելու համար պէտք է անհաստատ սառի մը վրայէն յառաջանալ, երբեմն մինչեւ կէս մէջքը ջուրին մէջ թաթխուած: Վայրկեանէ վայրկեան խեղդուելու վտանգը կ'աւելնայ՝ վրան գտնուած սառնակոյտին՝ ուրիշի մը դէմ խորտակումին վախովը:


Սակայն վերադարձի ուրախութիւնը կատարեալ շփոթի ըլլար: Քանեի ի արշաւախումբէն երեք հոգի բաժնուելով շատ առաջները ետ դարձեր էին. սակայն մինչեւ այն օրը մէջ տեղ չկային: Ապրուճայի Կուքսն ամէն կողմ փնտռել տուաւ զանոնք, բայց ի զուր: Անդառնալի կերպով կորած էին այդ թշուառները:

Սառնահայր. — Նաւ մը՝ որու ետեւէն կը վազեն
բռնելու համար

Հիմա կը մնար լիքուալ Բօլերը սառույցներէն ազատել ու համ-
բայ ելլել դէպի եւրոպա: Սառնահալը սկսեր էր արդէն: Օր մը
յանկարծ շոգենաւ սառերէն քլուելով, կոտրեց խարխախ շըղ-
թան ու սկսաւ հեռանալ: Ամէն մարդ իր գտնուած վիճակին մէջ,
որը հողաթափներով, որը պառկելու գտակով, վազեցին՝ շոգե-
նաւը չհեռացած մէջը մտնելու համար եւ պարաններով ու շըղ-
թաններով ամուր մը կապեցին զայն շրջակայ ժայռերուն: Օգոստ.
16ին, կէս գիշերը կէս ժամ անցած շոգենաւը մեկնեցաւ այդ ծո-
ցէն:

Թարգմ. Զ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ



ԲԱԿԼԱՅԻ ԽԱՂԸ

Երբ մայրիկը բակլայ կ'ստիկէ կերակուրին համար, ամենէն
խոշոր ու թարմ պարկուճներէն երկու հատ զատեցէք առէք: Ա-

սոնցմէ մէկուն (Պատ. 1) կռնակի թելը զմելինով մը կտրեցէք զատեցէք, միայն երկու ծայրերէն կցուած թողլով (Պատ. 4): Բակլային հատիկները հանեցէք մէջէն ու թելին երեսը տաշելով բարակցուցէք, որպէս զի առանց կոտրելու կարելի ըլլայ ծռել զայն:

Բակլայի մը մէջտեղէն ծակ մը բացէք (Պատ. 3) բաւական խոշոր, յիշեալ թելը երկուքի ծալլած մէջէն անցնելու չափ:

Երկրորդ պարկուճի մը երկու ծայրերէն կտրեցէք, առանց դաշելու զանոնք միացնող թելիկին (Պատ. 2):

Այս երեք կտորներով, որոնք 1, 2 եւ 3 պատկերներուն մէջ ներկայացուած են, կրնաք կատարել խաղը՝ որու ամբողջութիւնը կը ներկայացնէ (Պատ. 7):

Առաջին պարկուճին (Պատ. 4) երկու ծայրերը իրարու մօտ բերէք, այնպէս որ զանոնք միացնող թելը թուլնայ. երկուքի ծալլելով բակլային ծակէն անցուցէք (Պատ. 6) եւ այդ թելին մէջէն անցուցէք պատկեր 2ի բակլայի երկու ծայրերը միացնող թելը կ'ունենանք 5 ձեւը: Հիմա ջանալու էք զգուշութեամբ վեր քաշել թելիկը, անանկ որ երկրորդ պարկուճի թելը անցնի բակլային ծակէն (Պատ. 7):

Չուարճանալու համար կրնաք ձեր ընկերներէն մէկուն, որ խաղին տեղեակ չէ. ներկայացնել եւ խնդրել որ այդ երեք կտորներն իրարմէ զատէ, առանց մէկ հատին փնասելու:

ՓԻՂԻՆ ԾԱՆՐՈՒԹԻՒՆԸ ԻՆՉՊԷՍ ԳՏԱՆ

Երկու աշակերտներուն պատասխանը:

13. — Մինչ Բիպէր բլուրէն մեր տունը կ'երթայի, գետէ մը անցայ, Գանի մը ձիեր նաւակով կը փոխադրուէին: Երբ նաւակին մէջ ձի մը մտցուեցաւ, նաւակը աւելի ընկղմեցաւ ջուրին մէջ: Արդ, խեղճ արարածիս տկար կարծիքը աս է որ լաւ պիտի ըլլայ փիղը գետեզերք մը տանիլ եւ նաւակի մը մէջ դնել: Իր ծանրութիւնը՝ նաւակը քիչ մը պիտի ընկղմեցնէ: Ծփական գիծին (սու քէսիմի) վրայ գրիչով կամ ածուխի կտորով նշան մը ընելու է: Յետոյ փիղը դուրս հանելու եւ տեղը ոսկի դնելու է մէջը, մինչեւ որ նաւակը ընկղմի այնչափ որչափ կենդանին մէջը եղած ժամանակ ընկղմեր էր: Այսպէս ձիդ ծանրութիւնը պիտի գիտցուի:



Եթէ մեր ուշիմ ընթերցողները քիչ մը աշխատին, կրնան այս չորս պատկերները մէկ սափորի մէջ սեղմեցնել:

Տպագրիչ եւ Հրատարակիչ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ Ա.Լ.Ի ՃԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 38. ԻԳՏԱՄ ԼՐԱԳՐԻ ԴԷՄ

Գաւառները գլխաւոր քաղաքներու մէջ ընդհանուր ներկայացուցիչներ ունի տպարանս, որոնց կրնան դիմել տպագրական ամէն տեսակ գործեր ունեցող, եւ կամ ո՛ր եւ է գրքի մը պէտք ունեցողները, եւ փոխարժէքն անոր վճարելով, կ'ընդունին ապսպրանքները: Այս միջոցով իրենք կ'ազատին թէ՛ աւելորդ ծախսերէ եւ թէ՛ նախակի եւ այլ կորուստներէ. եւ ի՛նչ որ ամէնէն կարեւորն է, փոքր գումարներու փոխադրութեան համար յառաջ եկած դժուարութիւններէն ու հոգերէն կ'ազատին:

Գաւառներու մէջ Հանրագիտակի ՈՒԵԺ. Գործակալներու դիմողները կրնան սա առաւելութիւնն ալ վայելել որ, թէ՛ իրենց յանձնարարութիւնները կէտ առ կէտ կը կատարուին ամենակարճ ժամանակի մէջ եւ թէ՛ միշտ վստահելի անձնաւորութիւն մը կ'ունենան իրենց մօտ պատասխանատու ամէն առթիւ:

ԽՄԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՈՆԱՏԵՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20 էջէ բաղկացեալ :

Վեցամսեայ ու յոսամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր :

Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղ զազեան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
Գօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրկէրեան
Աւրոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրպա՛ա, Միսաք էֆ. Ս. Մելգոնեան
Թալաս, Կարապետ էֆ. Գօճաեան
Թեֆրսազ, Ասատուր էֆ. Արսէնեան
Թրիպոլի Գրիգոր էֆ. Հ. Գարագաշեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսաւրիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիրասոն Թովմաս էֆ. Դարադաշեան
Կիւրիկ, Գրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Հալէպ, Ս. էֆ. Պօտիկեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Արժ. Տ. Գրիգոր չահ. Թաշճեան
Մարաշ, Արժ. Տ. Նէրսէս Գհ. Շահինեան
Մարզուան Արամ էֆ. Գարակէօզեան
Միացեալ-Նահանգներ, Մ. Մ. Գարակապուրեան և Ընկ.
Նիկովիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Նիսսար, Յովհաննէս էֆ. Փանոսեան
Շապին Գարա հիսար. — Դագիկ էֆ. Օզանեան
Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան
Սասաօն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սրվազ, Միհրան էֆ. Իսպիրեան
Տիւրքմէն, Լեւոն էֆ. Սրապեան
Տրապիզոն Կովիտաս էֆ. Զարիֆեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան